ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ (ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ) ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ
10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դիմորդի անուն ազգանուն ____________________________________

Դպրոց ____________________________________

Ամսաթիվ ____________________________________

Գաղտնագիր՝

- - ✂ - - - - - ✂ - - - - - ✂ - - - - - ✂ - - - - - ✂ - - - - - ✂ - - - - - ✂ - - -

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ՝

1. Միավորների ընդհանուր թիվը՝ 20
2. Պահպանել ակադեմիական ազնվությունը
3. Ուշադիր կարդալ հարցերը և հետևել նշված հրահանգներին
4. Հարցարանը բաղկացած է 3 առարկաներին վերաբերող հարցերից. հայոց պատմություն(10 միավոր), համաշխարհային պատմություն (2 միավոր) և հասարակագիտություն (8 միավոր):

ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ (%-ով)՝____________________________________

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝____________________________________

Գաղտնագիր՝

Հայոց պատմություն (10 միավոր)

1. Ե՞րբ է ընդունվել «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից: ( 0.5)

ա.1918թ. մայիսի 28 | գ. 1990թ. օգոստոսի 23
բ. 1991թ.սեպտեմբերի 23 | դ. 1991թ. սեպտեմբերի 21

2. Առաջին հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվում էր՝ (0.5)

ա. Ազգային խորհուրդ | գ. Հայաստանի խորհրդարան
բ. Ազգային ժողով | դ. Սահմանադիր ժողով

3. Խորհրդային Միության հայ անվանի մարշալների ցանկից առանձնացրեք նրան, ով չպետք է լիներ տրված ցանկում . (0.5)

ա. Համազասպ Բաբաջանյան | գ. Արմենակ Խանփերյանց
բ. Սերգեյ Ագանով | դ.Նվեր Սաֆարյան

4. Ո՞վ էր «Նռան գույնը» հայտնի ֆիլմի ռեժիսորը . (0.5)

ա. Համո Բեկնազարյանը | գ. Ֆրունզե Դովլաթյանը
բ. Սերգեյ Փարաջանովը | դ. Սոս Սարգսյանը

5. Ո՞ր երկրի միջամտությամբ էր ստեղծվել Լոռու «Չեզոք գոտին» . (0.5)

ա. Բոլշևիկյան Ռուսաստանի | գ. Անգլիայի
բ. Ցարական Ռուսաստանի | դ. Թուրքիայի

6. Ու՞մ անվան հետ էր կապված Թուրքիայում 1919թ. սկսված ազգայնական շարժումը. (0.5)

ա. Աբդուլ Համիդ 2-րդի | գ. Թալեաթի
բ. Մուստաֆա Քեմալի | դ. Քյազիմ Կարաբեքիրի

7. Ու՞մ անվան հետ է կապված Սյունիքի ազատագրական շարժումը. (0.5)

ա. Գարեգին Նժդեհի | գ. Սեպուհի
բ. Դրոյի | դ. Անդրանիկի

8. Արցախի ազատագրական պայքարի հերոսներից ո՞վ էր կրում Կոմանդոս մականունը. (0.5)

ա. Շահեն Մեղրյանը
բ. Մոնթե Մելքոնյան
գ. Լեոնիդ Ազգալդյանը
դ. Արկադի Տեր-Թադևոսյանը

9. Գործիչներին համապատասխանեցնել գիտական ոլորտի հետ.(1.0)

Ա. Սերգեյ Մերգելյան
Բ. Արտեմ Ալիխանյան
Գ. Վիկտոր համբարձումյան
Դ. Հովսեփ Օրբելի

1. Արևելագիտություն
2. Աստղագիտություն
3. Ֆիզիկա
4. Մաթեմատիկա
5. Պատմագիտություն

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

10. Կատարել համապատասխանեցում.(1.0)

Ա.Էջմիածնի վանքը փակելու ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը
Բ. Բաթումի պայմանագիրը
Գ. Անդրֆեդերացիայի ստեղծումը
Դ. Խորհրդային պատմության «սև տարիներ»ը

1.1918թ. հունիսի 4
2.1947-49թ.
3. 1936-38թթ.
4.1921թ. մայիսի 15
5.1922թ. մարտի 12
6.1938թ.օգոստոսի 4

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

11. Դեպքերը դասավորեք ժամականագրական հաջորդականությամբ. (1.0)

Ա. Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումը
Բ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագրի ընդունումը
Գ. Շուշիի ազատագրումը հայկական ուժերի կողմից
Դ. Հանրաքվեից հետո Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի անկախության հռչակումը

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

12. **Կատարեք համապատասխանեցում. (1.0 )**

Ա. Սևրի հաշտության պայմանագիրը
Բ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը
Գ. Ալեքսանդրապոլի պայմանագիրը
Դ. ԽՍՀՄ-ի ստեղծումը

1. 1921թ. մարտի 16
2. 1922թ. մարտի 12
3. 1920թ. դեկտեմբերի 2-3
4. 1936թ.
5. 1922թ. Օգոստոսի 10
6. 1922թ. դեկտեմբերի 30

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

13. **1960-ական թթ. բնութագրվում են որպես ազգային զարթոնքի շրջան: Փորձեք փաստերով (առնվազն 3 փաստ) հիմնավորել այդ բնութագիրը: Ի՞նչ կարևոր հարցեր բարձրացվեցին ազգային կյանքի աշխուժացման ընթացքում: Ո՞վ էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարը, որի օրոք տեղի ունեցավ ազգային զարթոնքը.(2.0)**

--------------------------------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------------------------------

--------------------------------------------------------------------------------

Համաշխարհային պատմություն (2.0 միավոր)

Ընտրե՛ք տրված հարցերից *միայն մեկը* և պատասխանեք  տրված հարցերի շրջանակներում: 2.0 միավոր:

1. Ի՞նչ է մանդատային համակարգը: Բացատրե՛ք դրա էությունը՝ բերելով օրինակներ տարբեր երկների պարագայում: Ե՞րբ և որտե՞ղ է առաջին անգամ շրջանառվել «ինքնորոշման իրավունք» երույթը:
2. Որտե՞ղ սկիզբ առավ 1929-1933 թթ մեծ ճգնաժամը: Բացատրե՛ք դրա առաջացման հիմնական պատճառը: Ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին ճգնաժամը հաղթահարելու համար:
3. Ի՞նչ է ամբողջատիրությունը: Թվարկե՛ք այն բնութագրող առնվազն 3 հատկանիշներ: Ինչու՞ Իտալիայում և Գերմանիայում հաստատվեցին ֆաշիստական վարչակարգեր:

______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
__________________________________________________

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ(8.0 միավոր)

1. Ընտրովի պատասխաններով հարցեր. 5 միավոր. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0.5 միավոր:

1. **Իրավական պետությանը բնորոշ չէ.**
   Ա. բոլորը հարգում են Սահմանադրությունն ու օրենքները և հավասար պատասխանատվություն կրում օրենքի առաջ,
   Բ. օրենքներն ընդունվում և փոփոխվում են օրինական ճանապարհով,
   Գ. քաղաքացին պաշտպանված է, և բացառվում են կամայականությունները,
   Դ. օրենքը «վատ ու ոչ իրավական» լինելու դեպքում անհատը կարող է շրջանցել այն՝ պահանջելով այն փոփոխել:

2. **Երբ խտրականությունը կիրառվում է բացահայտորեն, խմբի կամ անհատի հանդեպ միտումնավոր խտրական վերաբերմունք կա, այդ դեպքում դրսևորվում է . 0.5 միավոր**
   Ա. ուղղակի խտրականություն,
   Բ. անուղղակի խտրականություն:
3. **Քաղաքացիություն ձեռք բերելու հիմնական գործոն չէ. 0.5 միավոր**
   Ա. ծնողների քաղաքացիությունը  բ. որևէ երկրում ծնված լինելու հանգամանքը,
   գ, այլ երկրում սովորելու հանգամանքը,  գ. ամուսնությունը այլ երկրի քաղաքացու հետ:
4. **Տնտեսական ռեսուրս չէ. 0.5 միավոր**
   Ա. բնական ռեսուրսներ  բ. մարդկային ռեսուրսներ,
   Գ. կապիտալ ռեսուրսներ,  դ. պետական ռեսուրսներ:
5. **Հանրային քաղաքականություն է ձևավորվում, երբ. 0.5 միավոր**
   Ա. հասարակության մեջ որևէ խնդիր է ի հայտ գալիս,
   Բ. բնակչությունը հայտնաբերում է որևէ խնդիր,
   Գ. հանրության անդամները գիտակցում և բարձրաձայնում են որևէ խնդրի մասին:
6. **ՀՀ Սահմանադրությունը ընդունվել է. 0.5 միավոր**
   ա. 1991 թ. սեպտեմբերի 21-ին բ. 1992 մարտի 2-ին գ. 1995 թ. հունիսի 5-ին դ. 1995 թ. հուլիսի 5-ին
7. **Մարդու տնտեսական իրավունքներից է. 0.5 միավոր**
   Ա. կյանքի իրավունքը,
   Բ. հանրային ծառայության ընդունվելու իրավունքը,
   Գ. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը,
   Դ. արժանապատվության իրավունքը:
8. **Հանրային բարիքներն այն ապրանքներն ու ծառայություններն են, որոնք 0.5 միավոր**
   Ա. տրամադրում են մասնավոր ձեռնարկությունները,
   Բ. հասանելի են միայն կառավարությանը,
   Գ.տրամադրում են օտար երկրները,
   Դ. տրամադրում է պետությունն այն դեպքում, երբ ենթադրում է սպառման անբացառելիություն և /կամ համատեղ սպառում:
9. **Պետական մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի մտավոր և մարմնական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով դպրոցներ, մարզական և մշակութային կենտրոններ և այլն: Այս ամենով պետությունը ապահովում է երեխայի. 0.5 միավոր**

Ա. մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը,
Բ. անվան ու քաղաքացիության իրավունքը,
Գ. առողջության պահպանման և ամրապնդման իրավունքը,
Դ. կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունքը:

**10. Օրենքը թույլ չի տալիս առանց ծնողի (օրինական ներկայացուցչի) համաձայնության երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին մինչև նրա. 0.5 միավոր**

Ա.18 տարին լրանալը, գ. 14 տարին լրանալը,
Բ. 16 տարին լրանալը, դ. 10 տարին լրանալը:

**2. Համապատասխանեցնել տնտեսագիտական հասկացությունները բացատրություններին. 1 միավոր (յուրաքանչյուր համապատասխանեցում՝ 0.25 մ.)**

| | |
|---|---|
| Ա.Տնտեսական բազմակացութաձևություն | 1.Բոլոր ռեսուրսների՝ բնական, կապիտալ և մարդկային, համատեղումը բարիք ստեղծելու նպատակով: |
| Բ. Ազատ տնտեսական մրցակցություն | 2.Տնտեսվարող սուբյեկտների միջև ընթացող մրցավազք ապրանքների արտադրության և առքուվաճառքի լավագույն պայմանների համար: |
| Գ. Ձեռնարկատիրություն | 3.Սուբյեկտի՝ օրենքով ճանաչված իրավունքը՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: |
| Դ.Սեփականության իրավունք | 4.Սեփականության բոլոր հնարավոր ձևերի, դրանց ազատ զարգացման և հավասար իրավունքներով գոյությունը և պաշտպանությունը: |

| ա | բ | գ | դ |
|---|---|---|---|
| | | | |

**3.1. Մեկնաբանել՝ ինչ են ընտրությունները, ինչ կարևոր նշանակություն ունեն ժողովրդավարության իրացման գործում: 1 միավոր**

------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------------------

3.2. Ներկայացնել պետության դերը տնտեսության մեջ. բացատրել պետության եկամտի աղբյուրները, պետական բյուջեի կառուցվածքը: 1 միավոր

ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ (չի գնահատվում)

**ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ** (չի գնահատվում)